

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Եվրոպայի հրեական խորհրդարանի անդամներին

խանց հյուրերի հաջքեին, որոնք վերադառնում էին Հայոց Եկեղեցու առաքելությանը՝ աշխարհապալից հայ ժողովրդի կյանքում, և դերակատարությանը՝ ազգային ինքնության պահպանության գործում։ Խոսվեց նաեւ միջկրոնական հարաբերությունների, երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում կարելու առաքելությունը իրականացնող երուսաղեմի Հայոց Մարտիրոսության եւ Երուսաղեմի սրբավայրերի կառավարման Հայ Եկեղեցու ունեցած իրավունքները պաշտպանության մասին։

Ուրուգվայի Սենատի նախագահին

Ամենայն Հայոց Հայրապետը և Ուղղակայի Սեւակի նախագահը մասնավոր անդորարժեք կատարեցին աշխարհում հոգեւոր արժեքների ամրապնդման և անկողմնակցությանը՝ դրանում կարեւորելով նաեւ եկեղեցու առաքելությունը: Ազատություն և խաղաղությունը կաստեղծվեցին բարձրագույն արժեքներ՝ զուգակիցները հաստատեցին, որ միայն դրանց պահպանությունն է զորացման պարագայում և հնարավոր ունենալ մարդկության բարօրությունը եղաշխավորող աշխարհի:

Գյուժրուժ հայտնիաց տան բացումը

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Վթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Վթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Սուշեղ եպ. Բաբայանը, Մայր Վթոռի լուսարարապետ Հովան եպ. Հակոբյանը, Զրիստենեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպ. Նավասարդյանը:



Հայորդյաց տան առջեւ Լորին Սրբությանն աղ ու հացով ողջունեցին հայորդյաց տան սաները: Ապա Ամենայն Հայոց Հայրապետը, Շիրակի մարզպետը եւ Գյումրու քաղաքապետը հատուցին մուտքի կարմիր ժապավենը եւ մուտք գործեցին հայորդյաց տուն: Շարունակություն՝ էջ 2

Շարունակությունը՝ էջ 2



Հանդիպման Ամենայն Յայտ Ջայրապետը գոհու-
նակություն հայտնեց հայ-ուրոգայալայան հարաբե-
րությունների զարգացման եւ գորրացման համար: Մո-
րիկ Մորուրույն, վերհիշելով Մուրուգայ կատարադրե-
լիով վարդապետական իր երկու այցելը, գնահատալեղով
ընդգեց, իր միշտ զգացել է հայ ժողովրդի կեսաւամբմով
հայրի իշխանաւորութունի կողմից դրսեւորելը բարյա-
ցակամ վերաբերմունցը եւ հարգաբեց, որոնք էլ իրենց
գործնական արտահայտւոյնն են գտել հայ հա-
մարտիկական շարժումի մէջ:



Ամենայն շայոյ Կաթողիկոսի սրբատաա կոնդակով Մեքսիկայի հայ համայնքներն ընդգրկվել են ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի կազմում

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի խնդրանքին ընդառաջ՝ Ն. Ս. Ս. Տ. Քարեգին Բ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատաա կոնդակով ԱՄՆ հայոց Արեւելյան թեմից առանձնացվել են Մեքսիկայի հայ համայնքները եւ ընդգրկվել ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի կազմում՝ հաշվի առնելով նաեւ Մեքսիկայի ու Կալիֆոռնիայի հայ համայնքների փոխադարձ սերտ առնչություններն ու Մեքսիկայի աշխարհագրական դիրքի նպատակահարմարությունը:

Ստորեւ ներկայացվում է հայրապետական կոնդակն ամբողջությամբ:

ՎԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ԶԻՄՈՒՄԻ ԵՐԻՏՈՒՆԻ, ՈՐՈՐՈՒՄՈՒԹԱՄԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՍՕԸՆ ԱԶԳԻՍ ԵՐԻՏՎՈՐՈՒՄԱՐԵՍ ԵՒ ՎԱՌԱՐԻԿՈՒ ՄԱՆԵԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԶԱՄԱՉԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՌՈՂՈՅ ԱՐԱՐԱՅՆՆԵՆ, ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՐԻԿՈՒ ԵՃՄԻԱԾՆԻ, ԵՐԻՏՈՒՄԱՆԱՐ ԽՈՐՈՅ ՈՐԶՈՅ ԵՒ ՕՐՀՈՒՄԻՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆ, ԿԻՆԿԻՈՅ ԿԱԹՈՐԻԿՈՒՄՈՒԹԱՆ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԱՆՆԵՆ ՀԱՅՈՑ, ՍՐԲՈՅ ԵՐՈՐԱՐԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍՈՅ, ԱՐԵՎԻԿԱՅԻՄԱՅ, ԵՐԻՏՎՈՐՈՒՄԱՅ, ՎԱՐԱՊԵՏԱՅ, ԶԱՆԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՎԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՒՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՆԶԱՅԻՆ ԽՈՐՀՐՈՐՈՅ ԵՒ ՊԵՇՏՈՒՆԻՑ ԵՒ ՍԻՐԵՑՏԱՆ ՀԱՄԱՆ ՀԱՐԱՏԱՅԵԱՆ ԺՈՂՈՎՈՐԵՆ ԶԱՅՈՑ

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում առ Քարծրեայն Աստուած, որ օրինում է զաւակներին ազգիս հայոց՝ մեր հայրերի սուրբ հաւատքի անխախտ վեմի վրա շէն ու պայծառ պահելու ազգային ու հոգեւոր իր կենսի անդատանը ի սփիւս աշխարհի:

Տակաւին 19-րդ դարում, երբ Օսմանեան կոտորածներից մազապուծ հայութիւնը բնակութիւն հաստատեց Հիւսիսային Ամերիկայում, երջանկալիշատակ հրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական Կոնդակով հաստատեց թեմական կառոյց Հիւսիսային Ամերիկա մայրցամաքում, որպէսզի արդիւնաւոր լինի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սպասարկութիւնը հաւատարմ մեր հայորդիներին, եւ հայրենակալութիւն մեր ժողովուրդը անմասն չմնայ հոգեւոր խնամատարութիւնից:

Հետագայ տարիներին եւ յատկապէս Հայոց Տեղապալանութեան հետեւանքով առաւել մեծ թուով հայորդիներ կենացի ապահովութիւն գտան Հիւսիսային Ամերիկայում: Հայ համայնքներ ձեւաւորուեցին Սիւրբաշ Լահիւնգների Արեւելեան, այնուհետեւ նաեւ Արեւմտեան շրջաններում եւ Կանադայում: Մեր Ժողովրդի հոգեւոր կենսից կազմակերպելու եւ հոգատարելու նպատակով, ընդամառ եկեղեցական վարչութիւնների խնդրանքին, զետեղ եւ Կազգէն Ա երջանկալիշատակ Հայրապետները հաստատեցին ԱՄՆ Հայոց Արեւմտեան եւ Կանադայի հայոց թեմերը:

Վերջին տասնամեակներին ժողովրդագրական տեղաշարժերի արդիւնքով մեծացել է հայորդեաց թիւը նաեւ Մեքսիկայում: Այս ընթացքում այցելու հոգեւորականների միջոցով մեր եկեղեցին շանքեր է բերել, որպէսզի Մեքսիկայում բնակեալ հայորդիները իրենց հոգեւոր ու ազգային կենսից կառուցեն մեր հայրերի սուրբ հաւատի նուիրական վեմի վրայ եւ անխախտ պահեն իրենց հոգեւոր ու ազգային ինքնութիւնը:

Այսօր հրամայական է առաւել մեծ հոգեւոր խնամք ու հոգատարութիւն մատուցել Մեքսիկայում բնակեալ մեր ժողովրդի զաւակներին: Այս առումով ընդառաջելով ԱՄՆ Հայոց Արեւելեան եւ Արեւմտեան թեմերի խնդրանքին եւ հաշվի առնելով Մեքսիկայի ու Կալիֆոռնիայի հայ համայնքների փոխադարձ սերտ առնչությունները եւ Մեքսիկայի աշխարհագրական դիրքի նպատակահարմարութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով Մեքսիկայի հայ համայնքներն առանձնացնում ենք ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմից եւ ընդգրկում ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի կազմի մէջ:

Հայրապետական Մեր օրինութիւնն ենք յղում ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդ զեղաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տեր-տերեանին, յորդորելով հովուական նախնաձախնդիր սպասարկութեամբ շանքեր բերել Մեքսիկայում համայնքային կառոյցների ձեւաւորմանը եւ արդիւնաւոր գործունեութեանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրինութիւնը, սերն ու բարեմարտանքներն ենք յղում Մեքսիկայում բնակեալ հաւատարմ Մեր սիրելի զաւակներին: Ի խորոյ սրտի աղօթում ենք եւ հայցում, որ Քարծրեայն Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի մեքսիկահայ համայնքը եւ երկնառաք Իր ամենակեցող շնորհներով առատապէս օրինի ու պայծառացի ազգային ու հոգեւոր կենսից Զրիստոստեմ մեր ժողովրդի այժմ եւ յաւիտեանս. ամեն:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Զո անշարժ պահեաւ եւ զերկր-պագոս անուանող Զում պահեաւ ի խաղաղութեան»:

Օրինութեամբ՝

ՎԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՐԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսա. Կոնդակ ի 21-ն Նոյեմբերի
յամի Տեան 2014 եւ ի թուին Հայոց ՈՆԿԳ
ի մայրական Սրբոյ Էջմիածնի
ընդ համարա 877

Գյումրու հայորդյաց տան բացումը

Սկիզբը՝ էջ 1

Ներսիս, նախագահութեամբ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահիան, կատարվեց կրթական նորարաց հաստատութեան օրինութեան կարգ, որից հետո Վեհափառ Հայրապետը եւ հյուրերը ծանոթացան հայորդյաց տան պայմաններին, այցելեցին հաստատութեան հարկի ներքո գործող տարբեր խմբակներ, գրուեցին մանուկների ու պատանիների հետ:

Այս թերակայի առիթով հայորդյաց տան դաշինքում տեղի ունեցավ հանդիպություն: Հանդիպությունը բացվեց Տերուհանկան աղբյուր, ապա ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. Հովնանյանը՝ ուրախութիւն հայտնելով Գյումրիում հայորդյաց տան բացման առիթով, որը պիտի իր կարեւոր ներդրումն ունենա Գյումրու մանուկների հոգեւոր, ազգային դաստիարակութեան գործում: Հայր սուրբը հույս հայտնեց նաեւ, որ համաձայն Վե-



լու հայորդյաց տան առաքելութեանը: Շիրակի մարզպետն ու Գյումրու քաղաքապետը նաեւ նվերներ փոխանցեցին իր գործունեությունն սկսող բարեգաղափար հաստատութեանը:

Այս առիթով Ամենայն Հայոց Հովհաննէսի այցը Շիրակի թեմ ողջուցեց Միքայել եպս Աջապահիանը: Սրբազանը ներկայացրեց հայորդյաց տան հաստատման պատմությունը: Այս կրթական

լու, որ ցանկանում է տեսնել Գյումրու առանձնահատուկ հայորդյաց տունն իր շնորհաշատ սաներով: Նորին Սրբութիւնը նաեւ ուրախութիւն հայտնեց, որ Հայոց Եկեղեցին պիտի կարողանա նաեւ Գյումրիում իր զավակների կրթութեան եւ դաստիարակութեան գործում ներդրում ունենալ:

Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր օրինութիւնը բերեց Շիրակի թեմի առաջնորդին: Նորին Սրբութիւնն իր գնահատանքը հայտնեց մարզպին եւ քաղաքային իշխանութիւններին, ինչպէս նաեւ՝ շինարարներին ու աշխատակազմին՝ Հայ Եկեղեցու եւ նրա ազգագուստ ծրագրերի հանդեպ նրանց բարոյացակամ վերաբերմունքի համար:

Խոսքի ավարտին, բարի երթ մտցնելով Գյումրիի հայորդյաց տանը, Ամենայն Հայոց Հայրապետն արդոթեց հայրենիքի անսասնութեան, Շիրակի մարզի եւ Գյումրիի բնակչութեան բարօրության համար:

Տերեկոյթի ընթացքում երաժշտական կատարումներով հանդես եկան Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ զեղարվեստական ղեկավարութեամբ Գյումրու ղեկավարութեամբ Զ. Զարգրիկյանի, հայորդյաց տան «Հայկական գարդոն-նախշեր» պարային համույթը եւ թատերական դասարանի սաները:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելեց նաեւ Ս. Գրիգոր Դ Լուսաւորիչի եկեղեցի՝ ծանոթանալու տաճարի վերականգնման աշխատանքների ընթացքին:



հաւիառ Հայրապետի տեսիլքի՝ մի օր հայրենիքի ամեն քաղաք եւ գյուղ կունենան նման հրաշալի հայորդյաց տուն:

Հանդիպության ընթացքում իրենց սրտի խոսքը փոխանցեցին նաեւ Շիրակի մարզպետ Ֆելիք Յովաննիսյանն ու Գյումրու քաղաքապետ Սամվէլ Բալասանյանը՝ կարեւորելով մարզկենտրոնում հայորդյաց տան բացումը եւ վստահութիւն հայտնելով, որ այն կդառնա մարզի մշակութային դիմազինը ներկայացնող կարեւոր օղակ: Մարզպետը եւ քաղաքապետը շնորհակալութիւն հայտնեցին Նորին Սրբութեանը՝ Գյումրիին նրանց երթելովը ընծա մատուցելու համար եւ հայտնեցին իրենց պատրաստակամութիւնը՝ ըստ ամենայնի աջակցե-

հաստատութեան մտահոգացման իրականացման համար շնորհակալութիւն հայտնելով Վեհափառ Հայրապետին, բարեգործին եւ բոլոր զորակցողներին՝ Շիրակի թեմի առաջնորդը շնորհակալեց Գյումրեցիներին՝ ընդգծելով, որ այսօր իրականացավ տարիների երազանքը, որին արժանի է Գյումրեցի մանուկը:

Հանդիպությունը փակվեց Ն. Ս. Ս. Տ. Քարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինութեան խոսքով:

«Մենք գիտենք, որ Գյումրիի շնորհալիների քաղաք է. այն առանձնահատուկ բոյր ունի, համ ու հոտ ունի: Եվ մենք վստահ ենք, որ այս հաստատութիւնն իր նպատակը կբերի դրան»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ ընդգծե-

Տրասարակվել է

Մայր Աթոռ Սր Էջմիածնում (2014 թ.)

Ն. Ս. Ս. Տ. Քարեգին Բ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինութեամբ Մայր Աթոռ Սր Էջմիածնի հրատարակչական բաժինը զեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակի առիթով վերահրատարակել է հայ ակաճակող լեզվաբան, գրականագետ Մանուկ Աբեղյանի (1865-1944) «Գեւորդ Դ Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց» կենսագրատում գիրքը մկիրված ճեմարանի հիմնադրման 25-րդ տարեդարձին:

Այն մեծագույն հարգանքի եւ սիրո տուրք է Հայ Եկեղեցու 123-րդ զահակալ Գեւորդ Դ Կոստանդնուպոլսեցի Բերեստեմյան (1866-1882) Հայրապետի խնկնի իշխանակին, ինչպէս նաեւ արժանաւակատ վավերագիրն է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման եւ գործունեութեան:

Գիրքը տպագրվել է մեկնաստութեամբ «Մարգիս Գաբրիելյան» հիմնադրամը:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Ս. Տ. Քարեգին Բ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրէնութեամբ կատարվել են նոր նշանակումներ:

Մայր Աթոռ Սր Էջմիածնի միաբան Քարեգին արեւոյ Համբարձումյանը, ով ամիսներ առաջ ավարտել է ուսումնաւորությունը Մեծ Բրիտանիայի Ենֆիլդի եւ Օքսֆորդի համալսարաններում՝ ստանալով դոկտորական աստիճան, նշանակվել է Մայր

Աթոռ Սր Էջմիածնի քրիստոնեական դաստիարակութեան կենտրոնի փոխտնօրէն:

Նորածն քահանաների Ընդդիմ քնն. Հանիյանը ծառայութեան է կոչվել Փուգարաց բժնում:

Լրատվական կոլորէր՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՐԴՐ ԷՃՄԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԻ





Վիթխարի է Յովհ. Թումանյանի ներդրումը 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարսկզբի հայ գրական-մշակութային կյանքում, եւ դժվար է պատկերացնել այս շրջանի որքան իրադրություն, որի այս կամ այն կերպ առնչություն ունեցած չլինի հանճարեղ բանաստեղծը: Եվ Թումանյանի, եւ այդ շրջանի մեր անվանի գրողների շատերի ակունքները կապված էին ժամանակի որեւէ նշանավոր թերթի կամ ամսագրի հետ, ավելին՝ նրանց նշանավոր գործերից շատերը քննարկում էին բնույթով նախ մամուլի էջերում (Բաֆֆու «Խենթը», «Ջալալեդդին», «Խաչագողի» հիշատակարան», «Ղալիբ Բեկ» վեպերը՝ «Մշակում», Պոռնյանի «Յեղերը», «Բողոք», «Հուլուն»՝ «Մարտի», Մուրացանի եւ Նար-Դոսի ստեղծ-

ՆՈՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԵՎ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԳԼԱՆԱՏԱՄԲԸ

ծագործությունները՝ «Նոր-Դար» ամսագրում եւ այլն), ապա միայն՝ տպագրվում առանձին գրքերով: Ինչպես ժամանակի մյուս լրագրերն ու ամսագրերը, այնպես էլ Գրիգոր Արծրունու «Մշակը» մեծ աշխատանք են կատարել հայ գեղարվեստական գրականության տարածման ու զարգացման գործում: Սակայն, ինչպես հենց Թումանյանը 1916-ին («Մենք ու մերը») իրավացիորեն քննադատել է, մամուլում տպագրվող գրողներն իրականում դարձել էին այդ ամսագրերի «գլխավորները», անդամագրվել նրանց կուսակցության ու դիրքորոշումներին, որովհետեւ նրանցից հեռանալու կամ հակառակ է ինքնուրույն տեսակետ արտահայտելու դեպքում նրանք ենթարկվում էին այդ ամսագրերի դժանի հարձակումներին: Սա է նաեւ հիմք տալիս Թումանյանին եզրակացնելու, որ գրողների նկատմամբ մեր մամուլում արտահայտված կարծիքներին, քննադատությանը պետք է մոտենալ որոշակի վերապահովմամբ, որովհետեւ մեր մամուլում «քննադատող կամ հայիողել հոմանիշ բառեր էին» (Յովհ. Թումանյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 7, Եր., 1995, էջ 449): Իրականությունն այն էր, որ գրող-

ներին տրվող գնահատականներում հիմնականում գերիշխում էր տվյալ ամսագրի ու նրա խմբագրին տրված գնահատական-քննադատությունը, որն էլ անուղղակի տարածվում էր այնտեղ տպագրված հեղինակի վրա: Հայ լրագրության հարուստ պատմության մեջ իր մայրուն տեղն ունի Գրիգոր Արծրունու հիմնած «Մշակ» պարբերականը, որն իր գոյության շուրջ 50 տարվա ընթացքում (1872-1921) նշանակալի դեր է ունեցել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքում: Լինելով ժամանակի հայ մամուլի առաջադիմական օրգանը՝ լրագիրը մեծապես նպաստել է 19-րդ դարի վերջին քառորդի արեւելահայ պարբերական մամուլի վերելքին: «Մշակին» անկողն սերտորեն կապված է նրա հիմնադիր խմբագիր՝ Գրիգոր Արծրունու հետ, որը լինելով ժամանակի նշանավոր գրողներից մեկը՝ մեծապես ազդում էր հասարակական կարծիքի ձևավորման վրա: Իր հիմնադրած լրագիրը դարձնելով ժամանակի նշանավոր գրական դարբններից մեկը՝ նա տարբեր տարիների «Մշակի» շուրջը համախմբեց բազմաթիվ անվանի գրողների եւ

հասարակական գործիչների (Բաֆֆի, Գ. Սուրդուկյան, Ա. Արախանյան, Ռ. Մատակյան, Ս. Մալումյան, Շիրվանզադե, Լեո, Գ. Բաշինջադյան, Վ. Փափաջյան, Ավ. Ահարոնյան, Ա. Արփախյան, Պ. Պոռնյան, Ղ. Աղայան եւ ուրիշներ): Թվարկածն անուններն արդեն վկայում են, որ Արծրունին անկասկած դարձել էր ժամանակի գրական կյանքի կազմակերպիչներից մեկը, եւ նշանավոր գրական գործիչ առաքելությունը չէր սահմանափակվում սոսկ խմբագրի հրապարակախոսական գործունեությամբ: Բնականաբար Գր. Արծրունին էլ իր «Մշակը» չէին կարող անտարբեր մնալ գրական կյանքի հանդեպ, եւ լրագրի էջերում տպագրվում էին ոչ միայն տարբեր հեղինակների գործեր, այլեւ բազմաթիվ գրախոսականներ ու քննադատական հոդվածներ: Թումանյանի եւ առհասարակ բանաստեղծի ու բանաստեղծության հանդեպ Արծրունու եւ «Մշակի» վերաբերմունքը ճիշտ հասկանալու համար պետք է նկատել, որ Գր. Արծրունին «Մշակի» էջերում իր խմբագրած տարիների (1872-1892) այնքան էլ «բարեհաճ» չգտնվեց չափաօրինակում, եւ պատճառներից



մեկն այն էր, որ իր գրական գործունեության հենց սկզբից Արծրունին համոզված էր, որ հայերը բանաստեղծություն չունեն: 1877-ի թիվ 39-ի առաջնորդում («Մենք պոեզիա չունենք») Արծրունին իրեն հատուկ՝ առարկություն չընդունող տոնով գրում է. «Մենք, հայերս, առհասարակ չունենք բանաստեղծություն եւ չունենք մեր Իլի հարուստ գրականության մեջ: Մի ազգի մեջ ճշմարիտ բանաստեղծություն ունենալու համար իարկավոր է, որ այն ազգի մեջ լինեք բարոյական գաղափարների ավելի մեծ պաշտպան, իսկ մեր մեջ ցանաճ չեն եղել երբեք բարոյական գաղափարների այնքան սերունդ, ցանաճ չեն եղել մտքեր, որ մեզանում կարողանար ստեղծվել ազգային բանաստեղծություն» (Մշակ, 1877, հ. 39):

Շարունակությունը՝ էջ 4

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՋԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵՏԻԶԻԿԱԿԱՆ ԱՆԵՍԱՐԻ ՎՐԱ

Երաժշտությունը՝ որպես հոգեւոր գործունեության տեսակ, սկզբից է առել տակավին վաղնջական ժամանակներում: Թերեւս սխալված չենք լինի, եթե ասենք, որ երաժշտության պատմությունը գրեթե նույնքան հին է, որքան մարդկության պատմությունը: Անշուշտ, մարդկության սկզբնավորման շրջանում երաժշտությունը չէր կարող լինել այնպիսի հարուստ, նրբագեղ եւ ներդաշնակ, ինչպես ավելի ուշ դարաշրջաններում, սակայն ինքնին այն փաստը, որ երաժշտությունը գրավել է մարդկային գեղեցիկ հին աշխարհում, արդեն իսկ շատ բան է վկայում հոգեւոր եւ գեղագիտական գործունեության այդ տեսակի կարեւորության մասին: Համաձայն պատմական վկայությունների երաժշտական մշակույթը կարեւորվել է թե՛ Ամուրի Հուսանաճում եւ Հոմոսում, թե՛ միջնադարում, թե՛ պատմական հաջորդող դարաշրջաններում: Ամուրյան երաժշտական մշակույթը լուրջ զարգացում է ապրել հազարամյակների ընթացքում եւ հասել այսպիսի կատարելության, որ հիացմունք է պատճառում միլիոնավոր մարդկանց, ովքեր իրենց կյանքը չեն պատկերացնում առանց հոգեւոր գործունեության այդ տարատեսակի: Այժմ հարց է առաջանում. ինչու է երաժշտությունը մշտապես գրավել եւ այժմ էլ գրավում մարդկանց ուշադրությունը: Ըստ երևույթին սրա հիմնական պատճառն այն է, որ երաժշտությունը ամիֆիզիկական եւ շատ բարերար ազդեցություն է թողնում մարդու հոգեֆիզիկական վիճակի վրա: Առհասարակ երաժշտությունը ունի բազմաթիվ գործառնություններ, որոնցից ամենավարելավոր, թերեւս, գեղագիտական գործառնությունն է: Ցանկացած նորմալ մարդ ցանկանում է գեղագիտա-

կան հաճույք ստանալ որեւէ բանից: Անշուշտ, մարդկանց գեղագիտական հաճույք պարզեւելու եղանակները շատ տարբեր են: Այդ նպատակին միտված են նաեւ արվեստի մյուս բոլոր տեսակները (կերպարվեստ, թատրոն, կինոարվեստ, գեղարվեստական գրականություն, ճարտարապետություն եւ այլն), սակայն երաժշտությունը ունի նորոգների խթանը չափազանց մեծ է: Ինչու: Այս հարցը պարզաբանելու համար համեմատենք երաժշտական մշակույթը գեղարվեստական գրականության հետ: Գեղարվեստական գրականությունը ընթերցելը եւ այն ճիշտ ընկալելն ու գնահատելը իրենից բերում է լրագրական մտածողական գործընթաց է ներկայացնում, իսկ մարդկանց մեծամասնությունը, օժտված լինելով միջին կամ ցածր մտավոր կարողություններով, ի գործ է ըստ արժանվոր գնահատելու բարձրագույն գրականությունը: Ի դեպ, նույն բանը կարելի է ասել բարձրակարգ դասական երաժշտության մասին, որը հաճախ անմատչելի է մարդկային հասարակության մեծամասնությանը: Հավանաբար նույն բանը կարող ենք ասել դրամատիկական թատրոնի եւ ինչու՞ ոչ լուրջ կինոարվեստի մասին, եթե խոսքը վերաբերում է Ասիայի Փափաքամու կարգի համադրելու միջոցների ստեղծագործություններին: Փաստորեն ստացվում է, որ լինելով երաժշտական արժեք է ներկայացնում, դժվար ընկալելի է, իսկ գուցե անհետաքրքիր մարդկանց զգալի մասի համար: Հավանաբար անհամաձայն իրողությունն է, քանի որ բարձր մշակույթով զբաղվելը եւ այն գնահատելու շնորհիվ ի վերուստ օրված են փոքրաթիվ զանգվածներ: Այդուհան-



դերձ երաժշտությունը, ընդ որում դասական երաժշտությունը, որոշակիորեն առանձնանում է արվեստի մյուս տեսակներից եւ շատ ավելի հետաքրքիր է ու գրավիչ բազմաթիվ մարդկանց համար, քան ասենք՝ ճարտարապետությունը: Բանն այն է, որ երաժշտությունը պարունակում է ծայրային կանոնավորված տատանումներ, որոնք ներառվում են ողջ մարդկային օրգանիզմի վրա: Իրականում երաժշտական ստեղծագործությունները ընկալվում են ոչ միայն ականջներով, այլեւ ողջ մարմնով: Ինչպե՞ս հայտնի է, ծայրային տատանումները բաժանվում են մարդկային օրգանիզմի մասին ողջ մակերեսով, իսկ մաշկը մարդու ամենամեծ օրգանն է: Երաժշտության գրավիչության պատճառներից մեկն այն է, որ այն ուղղակիորեն եւ անմիջաժամկետ ձևով մշակույթը, որն իրենից համարում է մարդու հոգեֆիզիկական աշխարհի վրա: Եթե մարդն ընկալման տարածքում չի գտնվում, երաժշտական մեղեդիներն ունակ են արդյունավետորեն բարելավելու նրա տրամադրությունը: Եթե որեւէ մեկը չափազանց ակտիվ է եւ գտնվում է լարված միջավայրում, հուզական վիճակում, ապա ճիշտ ընտրված երաժշտությունը

կարող է նվազեցնել լարվածությունը եւ հոգեկան հանգստություն պարգևել: Որոշ բժիշկներ կարծում են, որ մեղմ, սառն եւ ներկայանալ երաժշտություն լսելով կարելի է զսպել նույնիսկ ճիկնոտի-ճայիկ կախվածությունը: Հատ հոգեբաններ համոզվում են հայտնում, որ երաժշտությունն ի գործ է մեծացնելու մարդու մտավոր կարողությունները: Այս առումով հատկապես առանձնանում են Մոցարտի եւ Վիվալդիի երաժշտական երկերը: Հավելենք, որ շատ գիտնականների պնդմամբ, եթե երաժշտական վարժանքները հասարակից ունենում են Մոցարտի երաժշտությունը, նա ավելի խելացի է դառնում, քան այն երեխաները, ովքեր առհասարակ Մոցարտ չեն լսում: Ներկայացնենք եւս մեկ ուշադրալ գիտական փաստ, եթե նույնիսկ ավստրիացի մեծ երգահանի երաժշտությունը որեւէ մեկին դուր չի գալիս, միեւնույն է այն ունենում է երաժշտական մեղեդիներն ունակ են արդյունավետորեն բարելավելու նրա տրամադրությունը: Ահա այսպիսի երեք որեւէ մեկը չափազանց ակտիվ է եւ գտնվում է լարված միջավայրում, հուզական վիճակում, ապա ճիշտ ընտրված երաժշտությունը

բարերար ազդեցություն է թողնում թե՛ մարդկային հոգու եւ թե՛ մարմնի վրա, եւ սրա պատճառն այն է, որ մարդու հոգեֆիզիկական բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են: Եթե որեւէ մեկը տառապում է ֆիզիկական հիվանդությունից, ապա երաժշտության օգնությամբ ներազդելով նրա հոգեկան աշխարհի վրա կարելի է էապես բարելավել նրա ֆիզիոլոգիական վիճակը: Իսկ եթե մարդը տառապում է հոգեբանական խնդիրներից կամ հոգեկան խանգարումներից, որոնք, անկասկած, ժամանակի ընթացքում ֆիզիկական վնաս են պատճառում մարդկային օրգանիզմին, ապա ճիշտ ընտրված երաժշտությունը նույնիսկ այս պարագայում կարող է օգտակար լինել: Մի հետաքրքրական փաստ էս. հայտնի է, որ եվրոպացի անասնաբաններն իրենց կովերի գոմում հնչեցնում են Մոցարտի ստեղծագործությունները, քանի որ դրանից երկու անգամ մեծանում է կովերի կաթնատվությունը: Համաձայն փորձ է կատարվել նաեւ հուրիդային Միությունում. Հայկական երաժշտությունը լսելու արդյունքում կովերի կաթնատվությունը նույնպես զգալիորեն աճել է: Սակայն ավելի եթե կովերը ցածրաճաշակ են աղվուտ երաժշտությունը են լսում, օրինակ՝ «Խեչ» կամ «Ժամը ռոք», նրանց ֆիզիոլոգիական վիճակը կտրուկ վատանում է, ինչի արդյունքում կաթնատվությունը կամ նվազում է, կամ էլ ի սպառ չքանում: Այսպիսով պարզվում է, որ նույնիսկ կենդանական աշխարհի ներկայացուցիչներն ունակ են տարբերակելու լավ եւ վատ երաժշտությունը: Մտացվում է այնպես, որ եթե նույնիսկ կենդանիներն են գնահատում բարձրաճաշակ երաժշտությունը, ապա լուրջաբանցիկ մարդ արարած պարզապես պարտավոր է գնահատել եւ վայելել այն կյանքի որակը դրականորեն փոխելու համար:

Տիգրան ՍԱԼՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. քննադատ

Հին հռոմեական նշանավոր քաղաքական գործիչ, փիլիսոփա եւ հետեւոր Մարկոս Տուկիս Զիցերոնը (մ. թ. ա. 106-43) իրավագիտորէ գտնում էր, որ **ամուսնական միությունը մարդկային հասարակության առաջին աստիճանն է**, այսինքն՝ հասարակության հիմնաքարը: Դժվար է ասել՝ նա ծանոթ էր իր ժամանակի հրեաների կրոնափիլիսոփայական ընկալումներին, գիտեր ծննդոց գրքում շարադրվող արարչության պատմության մասին, թե՛ ոչ, սակայն գաղափարը, որ բանաձեւում է նա՝ մարդկային հարաբերությունների առաջին ու հիմնական աստիճանի մասին, խորքում հար է նման է հիսկուսակարայան պատումի բուն ոգուն ու բուն էությունը: Սա նշանակում է, որ նախաքրիստոնեական հասարակության համար են ընտանիք հասկացությունը, նրա կառույցը, վարքագիծը եւ առաքելությունը նույնպես կարեւոր դերակատարություն են ունեցել պետության, համայնքի, տոհմի, ցեղի կյանքում այնպես, ինչպես հետագայում քրիստոնեական հասարակության մեջ՝ աշուշտ քառադարյան ու հոգեբանական ընկալումների որոշակի տարբերակումներով:

Դառնանք ծննդոց գրքին: «Տեր Աստված ասաց. «Լավ է, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանությամբ մի օգնական ստեղծեմ նրա համար»:

Եվ Աստված թմրություն բերելով Ադամի վրա՝ հանցե նրա կողոսկրներից մեկը եւ ստեղծեց Եվային եւ բերեց նրա մոտ: Այսինքն՝ պատկեց նրանց:

Աղան ասաց. «Այժմ սա ուկոր է իմ ոսկորներից եւ մարմնի իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծվեց»: Այդ իսկ պատճառով տղա-նորը, թողնելով իր հորն ու մորը, պետք է միանա իր կնոջը, եւ երկուսը պետք է լինեն մի մարմին»: Աստված օրհնեց նրանց եւ ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք եւ լցե՛ք երկիրը...»:

Այսպես՝ ծննդոց գրքից տեղեկանում, որ մարդուն ստեղծելուց հետո Աստված կատարեց

ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է



տղամարդու եւ կնոջ թե՛ պսակի եւ թե՛ ամուսնության խորհուրդը՝ ինքը ղեկավարում էր հասկացության հիմնական առաքելության ու մեծագույն արժեքի՝ զավակածությունը:

Աստծո կողմից ընտանիք կառուցի կարեւորում էր ու արժեքավորում էր մենք տեսնում ենք նաեւ Իր Որդու՝ մեր Տեր Զիսուս Զրիստոսի ծննդյան պարագայում: Աստծո Որդին ծնվեց օրինական ընտանիքում, մեծացավ հոր եւ մոր սիրո ու ջերմության մեջ, ապրեց մի մթնոլորտում, ուր կային տղամարդու՝ որպես ընտանիքի, որ Իր մարդեղացած Որդին, մինչեւ լուսն Իր ժամանակի, ճաշակի հոր եւ մոր քաղցրությունը, ապրի տղամարդու եւ կնոջ՝ իրար հանդեպ ունեցած սիրո ու հավատարմության, միակամության ու գոհաբերումի ներդաշնակության մեջ:

Ընտանիքի աստվածադիր լինելու հերթական օրինակը մեզ է փոխանցում Զովիանսե ավետարանիչը, երբ նկարագրում է Կանայում տեղի ունեցող հարսանիքը, որին հրավիրված էին

Տիրամայրը եւ Տեր Զիսուս Զրիստոսը՝ աշակերտների հետ: Տիրոջ ոչ միայն ներկայությունը, այլեւ ջուրը գինու վերածելու հրաշքը հենց աներկբայորեն խոսում են Զրիստոսի՝ Նոր ձեւավորվող ընտանիքն օրհնելու մասին: Եվ Եկեղեցին, այն է՝ պատկառող քահանան, հենց այս խորհրդապաշտական գինին է, որ հրամցնում է ամուսնացող զույգերին՝ վկայելով նաեւ այն մասին, որ Տերն ի պատասխան փարիսեցիների՝ «Օրինավոր է, որ մարդ իր կնոջը արձակի» հարցին պատասխանեց. «Արդ, ինչ-որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»: Զրիստոսյան իր համար Տիրոջ խոսքը ոչ միայն ինչեքոսով հարցի պատասխան էր, այլեւ պատգամ, պատվիրան: Ուստի այն, ինչ ստեղծել, իրենք էլ օրհնել է Աստված, մարդը պարտավոր է պահել ու պահպանել, եւ մեր Եկեղեցին էլ, որպես Տիրոջ մարմին, որպես հայ ժողովրդի քրիստոնեական հոգեւոր արժեքների հավաքական կորույն ու փոխանցողը, դառն շարունակ, ի հեճուկս բոլոր դժվարությունների, բոլոր արտադրությունների, նախաթաղ կեցւոյով, հաճախ նաեւ ի մահ կանկայել, կատարել է իր

ստանձնած պարտավորությունները՝ Տիրոջ ու ազգի առջեւ. մասնավոր ընտանիքի, ընտանեկան արժեքների պահպանման գործում՝ ընտանիքը մշտապես դիտելով որպես փոքր Եկեղեցի՝ ըստ Տիրոջ այն խոսքի, թե՛ «Որ երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, այնտեղ եմ ես»՝ նրանց մեջ: Այսօր նույնիսկ նրանք, ովքեր հաճախ նախադրել են տեղի ընտանիքի անհաղաթում եւ Եկեղեցուն ու հոգեւորականին, քաջ գիտեն, որ հենց մեր Եկեղեցին ու հոգեւորականն են եղել հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային, գիտական ու հասարակական, քաղաքական ու սոցիալական մտքի ու կյանքի կերտողը, պահպանողն ու փոխանցողը: Սա գաղտնիք չէ եւ մանրամասնելու կարիք չունի: Սակայն այսօր քչերը գիտեն, թե ինչպիսին է եղել պատմական Զայաստանում քահանայի կանխորոշող, որը, ցավոք, աղճատվեց Մեծ եղեռնի, իսկ հետո նաեւ Զայաստանի խորհրդայնացման պատճառով: Իրենց ծխական քահանաների մասին եղեռնից մազապուրծ եղած մեր տառիկ-պապիկների պատմածներն այսօր միայն նախանձ կարող են շարժել: Քահանան ոչ միայն մկրտել, պատկել, թաղել է իր ծխի անդամներին, այլեւ, կնքահոր ու պատկառության քահանայի հետ միասին, լուծել է ընտանիքներում ծագած բոլոր վեճերը, իր խրատներով, խորհուրդներով հարթել բազում կնճռոտ հարցեր, նույնիսկ սոցիալական անտանիքի պայմաններում նպաստել ընտանիքներում շատ զավակներ ունենալուն, ապրիվորեն մասնակցել երեխաների դաստիարակչական գործին: Այդ իսկ պատճառով մեր պապերի ընտանիքներն իսկապես նման են եղել Եկեղեցուն՝ անգամ իրենց՝ ինչ-որ տեղ նվիրապատական կառուցվածքով, տան անդամներ

ի իրավունքների ու պարտականությունների ճշգրիտ բաշխումով՝ ըստ սեռերի ու տարիքի: Տղա երեխաներին մանկուց մեծացրել են որպես ընտանիքի ապագա նվիրյալ ամուսնու ու հոր, իսկ աղջիկներին՝ հետգանդ կնոջ ու սիրող մոր, ով հետո պիտի մեկ այլ ընտանիքի ծովը շեւացնի՝ նորը հին շարունակությունը դիտելով, բայց ոչ՝ հակադրելով:

Ի դեպ՝ զգալի է եղել նաեւ երեցկոջ դերակատարությունը: Շատ հարցեր, որոնք հուզել են կանանց եւ մանչեղ են այդ մասին խոսել քահանաների հետ, դիմել են երեցկոջը, եւ երեցկան ու սոցիալական մտքի ու կյանքի կերտողը, պահպանողն ու փոխանցողը: Սա գաղտնիք չէ եւ մանրամասնելու կարիք չունի: Սակայն այսօր քչերը գիտեն, թե ինչպիսին է եղել պատմական Զայաստանում քահանայի կանխորոշող, որը, ցավոք, աղճատվեց Մեծ եղեռնի, իսկ հետո նաեւ Զայաստանի խորհրդայնացման պատճառով: Իրենց ծխական քահանաների մասին եղեռնից մազապուրծ եղած մեր տառիկ-պապիկների պատմածներն այսօր միայն նախանձ կարող են շարժել: Քահանան ոչ միայն մկրտել, պատկել, թաղել է իր ծխի անդամներին, այլեւ, կնքահոր ու պատկառության քահանայի հետ միասին, լուծել է ընտանիքներում ծագած բոլոր վեճերը, իր խրատներով, խորհուրդներով հարթել բազում կնճռոտ հարցեր, նույնիսկ սոցիալական անտանիքի պայմաններում նպաստել ընտանիքներում շատ զավակներ ունենալուն, ապրիվորեն մասնակցել երեխաների դաստիարակչական գործին: Այդ իսկ պատճառով մեր պապերի ընտանիքներն իսկապես նման են եղել Եկեղեցուն՝ անգամ իրենց՝ ինչ-որ տեղ նվիրապատական կառուցվածքով, տան անդամներ

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵԿ XX դար


Սկզբը՝ էջ 4

Հայրենասիրական ոգին Նոր պոռթկումներ ունեցավ Զովիանսե Զիրազի ստեղծագործության մեջ: Լույս տեսան նրա «Բանաստեղծի ծայրը» (1942), «Երգերի գիրք» (1942), «Լիրիկա» (1946) ժողովածուները, գրվեց հանճարեղ «Բերիլա-նք» (1944): Սողոմոն Տարրիցին լույս ընծայեց «Ռազմի շեփոր» (1941), «Կրակե քառուղիներով» (1944) ժողովածուները:

Պատերազմի տարիներին գրական ասպարեզ մտավ բանաստեղծների մի Նոր սերունդ: Նրանցից ոմանք՝ Համ Եսայան, Վահագն Դավթյան, Հրաչյա Զովիանսյան, Խաժակ Գյուլնազարյան, նաեւ պատերազմի զինվորներ էին: Նրանցից ոմանց այս տարիների ծոված գրերը լույս տեսան 1945-ից հետո, բայց ոգով պատերազմյան տարիների արդյունք էին: Լույս տեսան Սիվա Կապուտիկյանի «Օրերի հետ» (1945), «Ձանգվի փպին» (1947), Գեորգ Էմիլի «Նախաշա-վի» (1940), «Նորը» (1946), Մարո Մարգարյանի «Մտերմություն» (1940), Համո Սախյանի «Ռոտունի եզերքին» (1946), Վահագն Դավթյանի «Առաջին սեր» (1947), Պարույր Սեւակի «Ամմահները

իրամայում են» (1948), Հրաչյա Զովիանսիայանի «Իմ կյանքի երգը» (1948) ժողովածուները: Ասպարեզում էին նաեւ միջին որակի բազմաթիվ բանաստեղծներ ու արձակագիրներ՝ Ծերուն Թորգոմյան, Վեսպեր, Սուրեն Վահուկ, Հրաչյա Զաչար, Լեոնիդ Զուրուկ, Զրիստափոր Թափալյան, Սիրաս, Արաքս, Աղավի, Կարսենիկ Աղայան, Զովիսիմե Պողոսյան, Վահան Գրիգորյան, Վահան Դաքեյան, Չարգանդ Դարյան, Ալեքսանդր Արաքսյան, Գարեգին Բեւ, Սիրտիչ Կեչեյան, Գուրգեն Բորյան, Աշուտ Շաքյան, Խաժակ Գյուլնազարյան, Աշուտ Գրաշի, Հարություն Մկրտչյան: Բոլոր այս գրողների երկերում կենդանի էր միայն հայրենիքի պաշտպանության ոգին: Գեղարվեստական բոլոր ձեւերով գրականությունը դիմագրավում էր պատերազմին եւ կոչում ու կոչում հաղթանակի ճանապարհը:

Պատերազմի տարիներին հայրենասիրական քննադատությունն ընդունում է քաղաքացիական ուղղվածություն, ինչն էլ դառնում է գրական երկերը գնահատելու չափանիշ: Հայրենական պատերազմի տարիներին քննադատությունը շեշտադ



Դ. Դեմիրճյան. գործ՝ Էդ. Խաչեկյանի

րում է գրողների հակաֆաշիստական ուղղվածությունը, ինչով էլ առանձնացվում է նրանց հայրենասիրական գործուներությունը: Այլեւ չկա «Նացիոնալիզմ» քննադատություն: Ավելին՝ պատմական անցյալի աստիճանաբար իր տեղն է վերականգնում:

Վահրամ Թերզիբաշյանը գրախոսում է Ն. Չարյանի «Կրեմ» ժողովածուն եւ նրան դրվատնում այն հատկանիշների համար, որով վերջինս մի քանի տարի առաջ Նացիոնալիզմի մեղադրանք էր ներկայացնում Զարեգին ու Բակունին: Նկատի ունենալով «Արգաշեանի խնձորները»՝ գրա

խոսն ավելացնում է. «Հիշում եք միջնադարյան մեղմախոս պոետ Գրիգոր Աղթամարցուն. նրա վարպետ ոճավորումն է սա, որ միանգամայն հասնում է իր նպատակին եւ ինչու էլ այսօր լիաճայն» («Սովետական գրականություն», այսուհետեւ՝ ՍԳ, 1942, թիվ 6, էջ 202):

Արշավոր Մխիթարյանը գրախոսում է Սողոմոն Տարրիցու բանաստեղծությունների հերթական ժողովածուն եւ այդ կապակցությամբ գրում. «Հայաստանի հին պատմության նյութերը Տարրիցին մշակել է նրան համադարձական չափով՝ հայկական տաղաչափությամբ՝ միջավայրի եւ ժամանակի կյուրիոսը պահպանելու համար»: Գրախոսը նկատի ունի հայրոց հին առաքյալներն ու ավանդապատումները՝ Արամ Աշխարհակալ, Տիրադ Մեծ, Տիրադունի եւ Աժդահակ եւ այլն:

Հետագայում պատերազմական այս օրերի քննադատության մասին Սուրեն Աղաքալյան պիտի գրեր. «Ազատագրական պայքարի մեծ փորձության օրերին ամեն ինչի չափանիշը դարձավ հայրենիքը: Բանաստեղծական չափաորոշը՝ ոճի մեկ ու չափը, հանգն ու բառը, այսուհետեւ ծառայում է ոչ թե չափած գեղագրության նպատակին, այլ գիտակցվում է որպես ռուսի, ակաբին, արկին հավասարաբեց տեսակ» («Ժողովրդի հերոսական ոգու ձայնը», ՍԳ, 1962, թիվ 10):

Շարունակելի
Համիկ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 5

Կոմպոզիտոր, կոնսերվատորիայի դասատու Միքայել Միրզոյանին իր հուշերում այդ մասին գրում է. «Ռոմփենտե սիմֆոնիկ նվագախումբը պետք է կազմակերպվեր լույս կոնսերվատորիայի ուսանողության վստիտ ուժերով, Արշակ Աղամյանը անվտանգ առարկեց. Ալեքսանդր Աֆանասևիչ, չէ՞ որ մեր ուսանողները դեռեւս վարժ չեն, մենք չունենք փողային գործիքներ նվագող փոքրիշատե հասուն ուսանողներ, իսկ չէ՞ր գտնուի, որ դեռ վաղաժամ է օրկեստր կազմակերպելը»:

- Ոչինչ, Արշակ Աբգարիչ, ոչինչ, մենք այդ բոլորը կշտկենք. ասում է Ալեքսանդր Աֆանասևիչը. ասում է ներքինները սկսել են տկար վիճակում: Մենք առաջով օրկեստրը կօգտագործենք առանց փողային գործիքների՝ (տե՛ս «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին», կազմ.՝ Ա. Թադևոսյան, Եր., 1960, էջ 123): Իհարկե, համակարգիչ է կոմպոզիտի անվտանգությունը պատճառը: Իրերը կոնսերվատորիայի տնօրեն՝ Նա մեծ պատաս-

ուսուցչության, վարչության անխնայ ջանքերով ստեղծվում է Նախ լարալին, ապա սիմֆոնիկ նվագախումբը՝ (տե՛ս Սպիրիդոն Մելիքյան, Ալեքսանդր Աֆանասևիչը մեր կոնսերվատորիայում, «Հոգվածների, հուշերի, փաստաթղթերի ժողովածու», կազմ.՝ Սպիրիդ Մելիքյան և Ալեքսանդր Թադևոսյան, Եր., 1964):

Սիմֆոնիկ նվագախումբը համալրելու, ամբողջացնելու համար մեծ աշխատանք էր պետք կատարել: Համապատասխան կադրեր պատրաստելու համար Նախ պետք էր կոնսերվատորիայում նվագախմբային դասարան ունենալ, ջանասիրտները պարապել աշակերտների հետ: Ուստի Սպենդիարյանը հանդես եկավ այդպիսի դասարան բացելու առաջարկությամբ: Այդ մասին իր «Երեւանի Պետկոնսերվատորիայի սիմֆոնիկ օրկեստրը» հոդվածում Նա գրում է. «Դիտելով ուսանողների աշխատանքները փորձերի միջոցին՝ ես եկա այն համոզման, որ անկասկած հասել է կոնսերվատորիայում օրկեստրի դա-

Արդեն 1925 թ. մարտի 21-ին պետկոնսերվատորիայի նվագախումբը՝ համալրված կազմով, Նրա ղեկավարությամբ հանդես եկավ համերգով՝ կատարելով Մոցարտի, Գրիգի, Ռոսինիի, Մենդելսոնի ստեղծագործություններ: Մամուլի գեղատեսիլներ են բարձր էր (տե՛ս «Խորհրդային Հայաստան» 24. 05. 1925): Ուշագրավ էին Նաե 1926 թ. Սպենդիարյանի ստեղծագործական գործունեության 25-ամյակին նվիրված համերգները՝ հորեւլարի ղեկավարությամբ եւ Թիֆլիսի պետօպերայի երաժիշտների մասնակցությամբ:

Տարիների ընթացքում նվագախումբը Նորառեն հաջողություններ ունեցավ, ձեռավորեց մշակութային գեղեցիկ ավանդույթներ եւ իր պատվավոր տեղը գրավեց հայ երաժշտական մշակույթի բնագավառում: 1927-1929 թթ. նվագախումբը ղեկավարում էր անվանի դիրիժոր Մ. Չարեքյանը, այնուհետեւ այդ պարտականությունն ստանձնեց Գ. Բուրադյանը: 1933 թվականից Նրա եւ Կ. Սարաջեի ղե-

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Սկզբում մենք Նրան միայն ուսուցիչ ենք դարձնում, հետո թաքցնում այն եակակ համաձայնությունը, որ կա Նրա ուսմունքի եւ այլ մեծ բարոյագետ ուսուցիչների սովորեցրածի միջեւ: Ռոմփենտե չպետք է թույլ տալ, որ մարդիկ նկատեն, որ բոլոր մեծ բարոյագետներն էլ ձեռնամուկ ուղարկվում են մարդկանց ոչ թե տեղեկություններ տալու, այլ հիշեցումներ կատարելու, վերահաստատելու բարոյականության սկզբնատեղի ու ծամծամված դրույթները, քանի որ մենք շարունակ թաքցնում ենք դրանք: Մենք աճեցնում ենք տոփետներ, իսկ ձեռնամուկ՝ Սովորատես՝ պատասխանելու նրանց: Վերոնշյալ վերակառուցումների մեր երրորդ նպատակը աստվածաբանական կյանքի կործանումն է: Զննամուկ իրական ներկայությունը, որ մարդիկ ապրում են աղոթքների ու հոգեւոր խորհուրդների միջոցով, մենք փոխարինում ենք պարզապես հավանական, հեռավոր, արդու ու ուրվագծային մի մարդով, ով խոսում էր տարօրինակ լեզվով եւ մեռել է շատ ժամանակներ առաջ: Այսպիսի մեկն իրականում չի կարող երկրպագվել: Սեփական արարածի կողմից երկրպագվող Արարչի փոխարեն դու շուտով ունենում ես պարզապես մի առաջնորդ, ով վկայվել է հետեւորդի կողմից, եւ վերջապես մի նշանավոր անհատ, ում խելացի պատմաբանը հավանության է արժանացրել: Եվ չորրորդ՝ բացի Նրանից, որ այսպիսի Հիսուսը պատմական չէ, այսպիսի կողմը մի ուրիշ իմաստով էլ է պատմության դեմ մեղադրում:

Ոչ մի ժողովուրդ իրականում չի գալիս ձեռնամուկ ճամբար էլ շատ ավանաբով անհատներ է գալիս) Հիսուսի կյանքի՝ որպես պարզապես կենսագրության, պատմական ուսումնասիրության արդյունքում: Իրականությունն այն է, որ մի ամբողջական կենսագրության համար անհրաժեշտ նյութերը անհայտ են պահվել մարդկանցից: Առաջին հետեւորդներին դարձել է բերել միայն մեծ պատմական փաստ՝ հարությունը, եւ միայն մեկ աստվածաբանական ուսմունք՝ Փրկությունը, որոնց հիմքում ընկած էր մեղքի գիտակցությունը, այն մեղքի, որը բխում էր ոչ թե մի Նորածե օրենքից՝ «մեծ մարդու» կատարած ինչ-որ նորամուծությունից, այլ հին, ծեծված, համընդհանուր բարոյական օրենքից, որն այդ հետեւորդները սովորել էին իրենց դայակներից ու մարդից: «Ավետարաններն» ավելի ուշ են ի հայտ գալիս եւ գրվել էին ոչ թե թրիստոնյաներ ծնելու, այլ արդեն եղած թրիստոնյաներին կրթելու համար:

«Պատմական Հիսուսը», հետեւաբար, որքան էլ վտանգավոր թվա մեզ որոշակի պահի, միշտ պետք է բացառվի: Թրիստոնյանքն են բարաբասկությունն միջեւ ընդհանուր առնչության վերաբերյալ մեր դիրքորոշումը շատ ավելի նուրբ է: Իհարկե մենք չենք ցանկանում, որ մարդիկ թույլ տան, որ թրիստոնյաները մուտք գործեն իրենց բարաբասկ կյանք, որովհետեւ իսկապես մեծ աղետ կլինի, եթե իսկապես արդար հասարակության պես մի բան հաստատվեր: Մյուս կողմից, սակայն, մենք ուզում ենք, եւ այն էլ շատ, որ մարդիկ թրիստոնյաները միջոց համարեն: Իհարկե գերադասելի է, որ դա լինի միջոց իրենց սեփական զարգացման համար, իսկ եթե դա չհաջողվի, ցանկացած բանի համար, նույնիսկ սոցիալական արդարություն: Դրա համար պիտի արվի հետաքրքիր: Նախ մարդուկ պետք է մղել արժեքներով սոցիալական արդարությունը որպես ձեռնամուկ պահանջած մի բան եւ ապա Նրա վրա ազդել այնպես, որ Նա թրիստոնյաներին արժեքների որպես սոցիալական արդարություն ծնելու միջոց: Ռոմփենտե ձեռնամուկ չի կարող որպես համարմունքություն գործածել: Այն մարդիկ կամ ժողովուրդները, որոնք կարծում են, թե կարող են հավատը վերաբարձել լավ հասարակություն ունենալու համար, կարող են Նաե կարծել, թե հնարավոր է երկնքի սանդուղք գործածել որպես կարճ ճանապարհ՝ մոտակա դեղատոմս հասնելու համար: Բարեբախտաբար, շատ հեշտ է այս փոքրիկ բանի շուրջ մարդկանց համոզել: Միայն այսօր ես հայտնաբերեցի մի թրիստոնյա գործի գործում մի հասարակ, որում եւ խորհուրդ է տալիս թրիստոնյաներին սեփական տարբերակը՝ այս հիմնավորմամբ, թե՛ «Միայն այսպիսի հավատը կարող է հին մշակույթների մահից եւ Նոր բարոյագրությունների ծնունդից հետո շարունակվել ապրել»: Տեսնում ես փոքրիկ ճաղը: «Հավատա» արան, բայց ոչ թե որովհետեւ այն ճիշտ է, այլ մի ուրիշ պատճառով: Սա՛՛ է խաղը:

Եւ սիրառատ ընդի՛

ԽԱՌՆԱԿՉՉ

Սկզբներից բարգմանությունը՝ Ս. Ս. Ի




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՀԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՄԻԴՅԱՆԻԿ ՆՎԱԳԱՆՈՒՄԵՐ ԵՎ ԱՐՇԱԿ ԱՂԱՄՅԱՆԸ

խանավություն էր կրում եւ չէր կարող չմտախոգվել, որ հանկարծ իր դեկավարած հաստատությունը կնանգնի ծախսողուների առաջ: Բայց Սպենդիարյանը վճռականորեն էր տրամադրված. Նա խանավարձավ էր կոնսերվատորիայի աշխատակիցների ջերմ վերաբերմունքից, իսկ ուսանողների մեջ բացահայտել էր դեռ անփորձ, բայց շնորհալի երիտասարդներ, որոնց հետ լրջորեն պարապելու դեպքում կարելի էր հաջողության հասնել: Միքայել Միրզոյանին իր հուշերում այդ մասին գրում է. «1924 թվականին, երբ Ալ. Սպենդիարյանը երեւան հրավիրվեց, երաժշտական ստուդիան նոր էր վերանվանվել եւ դարձել Պետկոնսերվատորիա: Մեր կոնսերվատորիայում ստեղծվել էր երաժշտական ջերմ մթնոլորտ: Այնտեղ էին աշխատում Ռոմանոս Մելիքյանը, Արուս Բաբայանը, ջութակահար Դավիթ Սողոմոնյանը: Այդ նույն թվականին Թիֆլիսից հրավիրվեցին Արշակ Աղամյանը՝ իբրեւ նորաբաց կոնսերվատորիայի դիրեկտոր, Օվսաննա Տեր-Գրիգորյանը, տոբոբիս հեղինակը, ջութակահար Օզանեզովը, իսկ տեղում՝ թավջութակահար Արտեմի Այվազյանը եւ Սպիրիդոն Մելիքյանը:

Կոնսերվատորիայի դասատուների ջերմ ընկերակցությունը ոգեւորեց Ալ. Սպենդիարյանին. Նա առաջադրեց կազմակերպել սիմֆոնիկ նվագախումբ» (Նույն տեղում): Հիշվում, մեծ էր առաջին համերգի թողած տպավորությունը, այնքան մեծ, որ տարիներ անց էլ շատերն այդ մասին խոսում ու գրում էին: «Սովետական մուզիկա» հանդեսի 25. 12. 1927, N 26-ի առաջին էջում տպագրված էր «Ա. Ա. Սպենդիարյանը եւ հայկական երաժշտությունը» հոդվածում Վ. Բելյաեւը Նույնպես անդրադարձել է այդ համերգին: Առհասարակ կարելու էր Սպենդիարյանի ներկայությունը Հայաստանում՝ երաժշտական կյանքի զարգացման ու հատկապես կոնսերվատորիայի արդյունավետ գործունեության համար, թեպետ պաշտոնապես այնտեղ չէր դասավանդում: Կոնսերվատորիայի գեղարվեստական խորհրդի նախագահ, կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանն այդ մասին գրում էր. «Եվսով Սպենդիարյանը 1924 թ. վերջին: Մտավ այս դասարանը, այն դասարանը եւ իր փորձված հոտառությամբ զգաց, որ այս մասնագետը դասարաններում մեծ ուժեր կան թաքցված, որ ժամանակն է արդեն դրանց դուրս բերելու եւ միավորելու:

Եվ իրոք, հենց նույն՝ 1924-25 ուսումնական տարում ուսանողության,



Կոնսերվատորիայի հին շենքը

տարան կազմելու ժամանակը: Այդ մասին եւ հայտնեցի վարիչին: Իմ կարծիքն ընդունվեց: Եվ 1925 փետրվարին վարիչի հանձնարարությամբ, որովհետեւ ինքը մեկնել էր Թիֆլիս, կոնսերվատորիայի դասատու Հովի. Հովհաննիսյանը մեծաքանակ լարային խմբի կորիզը (որ մասնակցում էր իմ կնեցերտին), միացնելով երկու Ֆլեյտա, երկու կլարնետ եւ երկու վարդհոն ու սկսեց փորձեցնել Մոցարտի G-moll սիմֆոնիան: Վարիչը Թիֆլիսից վերադարձավ, ստանձնեց օրկեստրը, եւ այդ օրվանից Նա դարձավ օրկեստրի պաշտոնական ղեկավարը՝ (Նույն տեղում): Սիմֆոնիկ նվագախումբը ստեղծելու գործում Արշակ Աղամյանն էլ շատ էր կարեւորում ինչպես կոնսերվատորիայի դասատուներ Իվան (Հովհաննես) Օզանեզովի, Դավիթ Սողոմոնյանի, Անդրեյ Կոտլյարեւսկու, Արտեմի Այվազյանի, Վիլիելմ Շպեդիկցի նվիրվածությունը, այնպես էլ Սպենդիարյանի վճռականությունն ու հաստատականությունը: Հետագայում եւ անկեղծորեն խոստովանում է. «...Հի կարելի չէր չէլ Ա. Սպենդիարյանի աջակցությունը. Նա պաշտպանում էր ամենուր գերիշխող այն համոզումը, թե նվագախումբը, ուր պետք է ստեղծվի, կստեղծվի:

Առաջին համերգի հաջողությունը գերազանցեց բոլոր սպասելիքները» (Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան լուսանկարներում, փաստաթղթերում եւ գրույցներում: Կազմ.՝ Ա. Գ. Բուրադյան 2008, ռուսերեն):

Ստանձնելով նվագախմբի ղեկավարի պարտականությունները՝ Ա. Աղամյանը ջանքեր չխնայեց այն պատշաճ մակարդակի հասցնելու համար:

կավարությամբ նվագախումբը հանդես էր գալիս որպես Հայաստանի պետօպերայի նվագախումբ: 1945 թվականից սիմֆոնիկ նվագախումբը կրկին տարանջատվեց օպերային թատրոնի նվագախմբից եւ ինքնուրույն սկսեց հանդես գալ որպես Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ: Գեղարվեստական ղեկավարը երկար տարիներ վաստակաշատ խմբավար Միքայել Մալունյանն էր, որի շնորհիվ էլ այս կոլեկտիվը մեծ ճանաչման հասավ: 1962 թ. փետրվարի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ նվագախմբին նորից էր «ՀԽՍՀ վաստակավոր անսամբլի» կոչում: Հիշվում, իրականացավ Ալ. Սպենդիարյանի այն կանխատեսումը, թե՛ «...Կգա այն ժամանակը, երբ մեր դեռեւս համեստ, աշակերտական նվագախումբը հպարտությամբ կկրի «Հայաստանի Պետական նվագախումբ» պատվավոր անունը»: Որպես գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր՝ այս նվագախմբի հետ են կապված Նաե անվանի այնպիսի երաժիշտների անուններ, ինչպիսիք են Կ. Սարաջեւ, Օ. Դուրյանը, Վ. Գերգիեւ, Ա. Զաքարյանը, Դ. Խանջյանը, Լ. Զգևալանը, Ռ. Մանգասարյանը, Ռ. Վարդանյանը, Ս. Տերյանը եւ ուրիշներ: Այսօր էլ անվանի խմբավար Ե. Դուրաթ Թոփչյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբն ակտիվորեն մասնակցում է հանրապետության մշակութային միջոցառումներին, համերգային շրջապայություններով հանդես գալիս տարբեր երկրներում:

Տղարան ՍԱՐԱՅԱՆ

Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ



ԸՆՏԱՄՆԻՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

Սկիզբը՝ էջ 6

Պոլեմոս, բարոյական, ինչու չէ, նաեւ կրթական, տնտեսական ու սոցիալական փոխօգնության նման ինստիտուտ ունեցող Եկեղեցու շնորհիվ էր, որ մեր ազգը, նույնիսկ պետականության բացակայության պայմաններում, նույնիսկ օտարների լծի տակ, սոցիալական ու տնտեսական ծանր պայմաններում կարողացավ ոչ միայն գոյատևել եւ հասնել մինչեւ մեր ժամանակները, այլեւ վերստին ստեղծեց պետություն ու պետականություն:

Ցավոք, այսօր մեր Եկեղեցին դեռես հնարավորություն չունի լիարժեքորեն մտնելու իր ծառայական կերպի մեջ, չի կարողանում վերագտնել այն դերակատարությունը ժողովրդի կյանքում, որ ունեցել է նախնիները: Պատճառը եզակի չէ, սակայն ամենամեծ պատճառներից մեկն այն էր, որ հորիզոնային միության անհատականային ու հաղթանակական գաղափարախոսությունը դուրս մղեց Եկեղեցուն ժողովրդի կյանքից, ազգային ու հանրային կյանքի շատ արժեքներ նսեմացրեց ու ոչնչացրեց, մարդկանց կորցեց իրենց սրբազան ավանդույթներից ու սովորություններից, իրենց պապական սուրբ «Հացից»՝ սուղը կեղծ ու սին արժեքներ ներմուծելով: Սա կարծես քիչ էր, հիմա էլ իբր քաղաքակրթված, ժողովրդավար դարձած եվրոպացի փարիսեցիներն են փորձում իրենց՝ հեթանոսական հիշեցնող օրենքներն ու նորմերը փարթալել մեր վզին՝ կանանց, երեխաների, գեղեցիկային հավասարության իրավունքների անուն հերքելու տակ, որոնց նպատակն առաջին հերթին «Ընտանիք» սուրբ կառույցի քայքայումն է: Մենք այդ ցավալի պարտադրանքներից մեկն արդեն ճաշակել ենք, երբ մեր տան դռները բացեցինք աղանդների առջեւ: Կարծում եմ՝ դեռ ուշ չէ, դեռ կարող ենք մարդու, կանանց, երեխաների եւ այլոց իրավունքներից առավել կարեւորել, առավել արժեքաւորել, գերադասել **ազգի իրավունքը**: Մենք այնքան շատ չենք, որ թույլ տանք բզկտել մեզ:

Հաճախ կարելի է լսել, թե ընտանիքը պետության հիմքն է: Դա այդպես է: Բայց հենց այստեղ էլ ստացվում է պարադոքսալ մի վիճակ: Այսօր մեր կենցաղային պայմանները, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, պետության կողմից ընդունված օրենքների արդյունքում ձեւավորված հասարակական կյանքը, պետական կառույցները՝ իրենց մտածողությամբ ու անարդյունավետ գործողություններով, խեղդում են կյանքի քրիստոնեական ընկալումները եւ առավելագույն ընտանիքի դեռ զրկանում: Այդ խեղդումն առաջին հերթին սկսվում է երեխաների դատարարականությունից՝ սկսած մանկապարտեզից, դպրոցից, բուհից, ապա նաեւ՝ աշխատանքային հարաբերություններից: Զիշտ է՝ այսօր դպրոցներում անցնում է միայն Եկեղեցու պատմությունն առարկան, ինչը

խիստ խրախուսելի է, սակայն մենք գիտենք, որ այն նպատակ չունի Աստծոն ճանաչելու գիտելիքներ տալ երեխաներին. այն լավագույնս տալիս է միայն Եկեղեցու ու Աստծո մասին գիտելիքներ, ծանոթացնում մեր տոներին ու ծեսերին՝ առանց լռելոց խորանալու դրանց բուն էության մեջ:

Աստծո մասին գիտելիքները, ինչպես որեւէ այլ գիտելիք, յուրացվում է միայն մտքով ու հիշողությամբ, ուսուրի վերոհիշյալ առարկան դպրոցներում ուսուրբար դառնում է վերացական, կրոնական ճշմարտությունների մակերեսային յուրացում՝ առանց ներթափանցելու հոգու խորքը: Աստծոն ճանաչելու ու Աստծո մասին գիտելիք ունենալը տարբեր բաներ են: Ուսուրի դպրոցը չի կարող վերականգնել մեր քրիստոնեական մտածողությունը, բարոյական նորմերն ու ավանդույթները՝ մանավանդ արդեն մի տեսակ դեպիվացիայի ենթարկված ընտանեկան արժեքները: Երեխան կարող է Աստծուն ճանաչել միայն ընտանիքում՝ քրիստոնյա ծնողների դաստիարակությամբ, Եկեղեցում՝ պատարագներին ու ժամերգություններին մասնակցելով, համայնքի քահանայի ակտիվ աշխատանքով՝ թե՛ ծնողներն էլ թե՛ երեխաների հետ: Ցավոք, այս միջոցն էլ է կիսատապառ: Զափազանցություն թող չթվաւսաճ՝ դուք պատարագների հազվադեպ կարող եք հանդիպել ծիսակատար քահանայի կնոջն ու զավակներին, ընտանիքի անդամներին: Կյս դեպքում հարց է ծագում՝ ի՞նչ իրավունքով պիտի ծիսի, համայնքի քահանան հորդորի ծնողներին՝ Եկեղեցի գնալ երեխաների ձեռքը բռնալ:

Ասում ենք՝ ընտանիքը պետության հիմքն է, եւ իսկապես դա այդպես է, սակայն, ցավոք, մերօրյա շատ օրենքներ ու օրենսդրական ակտեր իսկապես ուղղված են ոչ թե ընտանիքների պահպանության ու զարգացմանը, այլ՝ քայքայմանը: Ազգի կենսական, խթանիչ ուժն ի վերջո սկսվում է ընտանիքից, ընտանիքում ձեւավորված անհատից: Ընտանիքն է անհատի ազատության, անհատի արժանապատվության, ստեղծագործական մտքի ու գործունեության հիմնական միջնաբերդը, քանզի հանրությունը մշտապես է առավելապես վարակվում է առաջադեմ, հոգեւոր ու բարոյական արժեքներ կրող անհատի գաղափարներով, ձգտում գնալ նրա ճանապարհով, նրա օրինակով տեղ դառնում իր սրբություններին, նախնից Ժառանգությունը, հայրենիքին: Իսկ այդպես, ազգային բարոյահոգեբանական նորմերից հեռու ընտանիքում հազվեթե ծնվի ազգի ցանկալի շավակը: Ամենեւին պատահական չէ, որ օրըստօրե գլոբալիզացիայի ենթարկվող աշխարհում հանրության արմատական վերափոխումի գեղը հենց առաջին հերթին ուղղված է ընտանիքի դեմ, ուղղված է նրա ավանդական, այն է՝ Եկեղեցու փոքր մոդել հանդի-

սացող կառույցի փոփոխման ու այն հիմնովին քարոզելուն: Տեսե՛ք. երբ Եկեղեցին հանվեց մեր կյանքից, որքան ավերվեցին մեր փոքր Եկեղեցու՝ ընտանիքի հիմնապոլսերը: Շատացան ոչ օրինական, այլ կերպ սառած՝ քաղաքացիական ամուսնությունները, երբ զույգերից ոչ մեկը, ըստ էության, պատասխանատվություն չի կրում մյուսի հանդեպ, ազգային աղետի վերածննդի ամուսնալուծությունները, որոնք կամա թե ակամա վնաս են հասցնում ոչ միայն զույգերի հոգեկան աշխարհին ու հոգեբանությանը, այլեւ մեծապես վտանգում երեխաների՝ դեռես ոչ լիարժեք ձեւավորված աշխարհը: Նրանց մանկական զգայուն հոգիները դժվարանում են ըմբռնել ծնողների արարքը: Դոր եւ մոր փրկով եղուն, հոգատար ու հարգալից մեղուրտի փոխարեն նրանք, ասես, ընկնում են լքված, չսիրված, ցանկալի չլինելու տառապանքների մեջ, ինչը հետագայում նրանց մեծ մասին դարձնում է ինքնավերջ, ետակներտուն, հաճախ նույնիսկ՝ մարդադաշտ ու հանցագործ: Նման երե-

կույթում ծնված ու սնված կինը, ով տղամարդու հետ հավասար ծովել է նույն մկրտության ավագանից, ընդունել նույն դորշմը, իրավունքների ամուսնով արդեն իսկ հավասար է տղամարդուն, խնդիրը միայն պարտականությունների մեջ է, ինչը թխում է լոկ ֆիզիոլոգիական տարբերությունից: Քրիստոնյա Հայաստանում կինը երբեք ստորադասված չի եղել տղամարդուն: Հայ կինը դարձել էր շարունակ, մինչեւ իսկ խորհրդայնացման առաջին տասնամյակները, եղել է ընտանիքի օջախը վառ պահող այն կրակը, որին սիրել, հարգել ու փայլալել են թե՛ ամուսնից եւ թե՛ զավակները: Հայ կինը տիրամոր պատկերն է եղել ընտանիքում: Մեզանից նրանք, ովքեր բախտ են ունեցել տեսնելու իրենց մեծ տատիկներին, վայելելու նրանց մատուցած ճաշն ու քաղցրավենիքը, լսել նրանց խրատները, հեքիաթներն ու կյանքից վերցրած ուսանելի պատմությունները, կիսատես, թե ինչ հարգանք ու ակնածանք ունենալու մնացյալ անդամները տատիկի նկատմամբ: Ուստի լավ կլինի



խաների հետ, երբ փորձում ես խոսել Աստծո մասին, հասկանում ես, որ ոչ միայն չես ընդունում Աստծուն, այլ իրենց չարիքի բուն պատճառը համարում ես նաեւ Աստծուն:

Քրիստոնեական արժեքներից հեռացումը բերեց մեզ նաեւ նրան, որ 20-րդ դարում արդեն մենք՝ մայրերս, դարձանք որդեպաններ. արթնող շնչալից կերպով մուտք գործեց մեր կյանք, իսկ այսօր նաեւ սեռազույգ արթնունների պատճառով կանգնած ենք վաղը հայ մայրերից զրկվելու վտանգի առջեւ: Գաղտնիք չէ, որ հիմնականում մայրն է խոսում երեխայի հետ, մայրն է դաստիարակում երեխային եւ մեծապես մորից է կախված, թե երեխան հետագայում որ ազգին է պատկանելու:

Կարծում եմ՝ այստեղ առավել Եկեղեցին անելիք ունի: Գոնե պետք է հասնել նրան, որ թե՛ ոչ արթնուններն արգելվեն պետականորեն, ապա գոնե սեռաճանաչման նախնական ստուգումները վերացվեն, այնպես կարճ ժամանակ անց մենք ազգովի կկանգնենք դեմագրաֆիկ լուրջ խնդիրների առաջ, եւ այդպես ոչ մի օրենք ու ռեֆորմ մեզ չի փրկի:

Իսկ ինչ վերաբերում է կանանց, երեխաների իրավունքների պաշտպանությանը, ապա դժվար գտնվի մի ազգ, որի ավանդական, քրիստոնեական արժեքների վրա հիմնված ընտանիքում զավակի հանդեպ լինի այնքան սիրո ու նվիրումի, զոհաբերումի ու գոհողությունների պատրաստակամություն, որքան առկա է եղել եւ այսօր էլ դեռես կա հայ ընտանիքներում: Իսկ եթե այսօր կան երեխաներ, որոնք զրկված են իրենց իրավունքներից, ապա պատճառը ոչ թե ազգային է, այլ միմիայն սոցիալական: Դառնանք հայ կնոջը՝ Կինը՝ մանավանդ քրիստոնեական մշա-

այսօր դրսից ներմուծված գաղափարներով սնվող հասարակական կազմակերպությունները, օտար տերությունների ճնշման տակ գտնվող մեր օրենսդիրները վաղի շատ փորձեք բարձրացնել ու ամրագրել մեր իսկ ազգային ընտանեկան ավանդույթները՝ շաղկապած քրիստոնեական ու ազգային բարոյական մեր չափորոշիչներով, դարեւորված անցած ու դարերի մեջ թրծված մեր ինքնության կնիքով: Իսկ Հայ Եկեղեցին, Թեքեյան բանաստեղծի խոսքերով սառած՝ «Հայ Հոգիին ու Մարմնի 2րդահանդերձը փայլուն», այսօր կարծես փոքր-ինչ շփոթաբար վիճակում է: Կարծես դեռես չգիտի՝ որտեղից պիտի սկսի: Փոքր բան է ասած, բայց գուցե սկսենք նրանից, որ հոգեւորական սովորի փոքրոցը, խառնուրդ, թատրոնում, թանգարաններում, մի խոսքով՝ ամենուր եւ մշտապես կրել իր սքեմը, կապան: Այսօր տպավորություն է ստեղծվում, որ սքեմն աշխատանքային համագեղան է, եւ երբ Եկեղեցում չես, այն ավելորդ է: Կամ սկսենք մեզանից՝ Եկեղեցում ծառայող աշխատողներին: Անավույթան կարող ենք ոչ ավել՝ ընդամենը 5 րոպե հատկացնել աշխատանքն արդյունքով սկսելուն: Իհարկե կարող ենք, ցանկություն է պետք միայն:

Ես հավատում եմ, որ մեր Եկեղեցին միանգամայն ի գործ ու լիարժեք վերագտնելու իրեն եւ պետք է աներկաբ կանգնի իր հոտի պաշտպանության դիրքերում, ինչպես բարի հովիվն է գնում ու փնտրում իր կորած՝ նույնիսկ մեկ հատիկի ոչխարը: Ի՞նչ որ մեկ ոչխարը կարող է բազում գառների մայր լինել: Մենք նրան կողոնելու իրավունք չունենք: Մենք մեր պապերի հորը, մեր սրբությունների ու հիշատակների սրբոց դատարկելու իրավունք չունենք: Եթե ոչ մեր սերունդները, ապա պատմությունը մեզ չի ների:

Սատղիկ ՍՏԱՍՐԼԵԱՆ

ԵՐԻՍՏՈՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Սատղիկ Ստամբոլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սր Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 17.12.2014 թ.

Տպագրանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ